



[Սփյուռքի ներկայացուցիչներ](#)

Հայր երեխայի երգ ու պարով հպարտանում, բայց հայկական դպրոց տանելու մասին չի մտածում

Գալուստ Տրապիզոնեան. «յուրաքանչյուր հայ պետք է ամեն ինչ անի եւ՝ Հայաստանի, եւ՝ Արցախի զարգացման համար»

[Վերատպություն](#)

ԹԱՄԱՐՆ ԻՐՕՔ ՉԻ ԻԻՐԱՅՐԵԼ ՄԻԼԻՈՆԸ, Բայց ՀԱԿԱՌԱԿ ԻՐ ԿԱՄՔԻՆ

ՏԱԳՆԱՊԸ ՀԱՍԱԻ ՍԻՐԻԱ, ԱՅՍԻՆՔՆ ՆԱԵԻ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ

«ՄԵԿ ԹԱՄԱՐ, ՄԵԿ Ազգուտակե-ի ԹԱՄԱՐԸ Մատր մտցրել է ՄԵՂՈՒԻ ԲՈՒՆԸ

[Հայրենադարձներ](#)

Հայրենիքում՝ Հայրենիքի համար



Սփյուռքի ներկայացուցիչներ

**Հայր երեխայի երգ ու պարով
հպարտանում, բայց հայկական
դպրոց տանելու մասին չի
մտածում**

2011-04-14

-Եր ֆ է ձեւաւորուել Տոմսկի հայկական

համայնքը:

-Տոմսկի հայկական համայնքը ստեղծուել է 1993 թուականին եւ միայն 2004 թուականին պաշտօնապէս գրանցուել որպէս «տոմսկի շրջանի հայերի միութեան Տոմսկի ռեգիոնալ հասարակական կ'ազմակերպութիւնէ: Մեր համայնքը Սիբիրի լաւագոյն համայնքներից մէկն է:

-Ինչո՞վ է արտայայտում դա:

-Համայնքին անհրաժեշտ ենթակառուցուածքները համատեղ են գործում եւ ծրագրերն էլ նոյն կերպ ենք իրականացնում: Ունենք հայկական մատուռ: Այն գտնւում է քաղաքի մուտքի մօտ, եւ առաջինը, ինչ տեսնում ենք քաղաք մտնելիս՝ մատուռն է: Համայնքում գործում է նաեւ կիրակնօրեայ դպրոց: Ունենք պարի անսամբլ. «նաիրիէ ենք կոչել, եւ այն արդէն որոշակի ճանաչում ունի, երկու տարբեր մրցոյթներում գրան-պրի է շահել՝ շնորհիւ պարուսոյցների աշխատանքի, 70 աշակերտների աշխատասիրութեան եւ համայնքի ուշադրութեան: Մեր համայնքում գործում է նաեւ «արաքսէ երգի խումբը: Արդիւնքում մեր սեփական ուժերով կարող ենք անցկացնել 5 ժամանոց համերգ: Դա հնարաւորութիւն տալիս բոլոր ազգային ու եկեղեցական տօները մեծ շուքով նշելու:

-Իսկ ի՞նչ կարգով եւ ծրագրով է գործում կիրակնօրեայ դպրոցը:

-Երկար էի մտածում, թէ ինչպէս կարելի է համախմբել հայերին եւ հասկացայ, որ պէտք է դպրոց ստեղծել: Չէ՞ որ հայութիւնը մի թուլութիւն ունի՝ երեխաները: Գնացինք 16-րդ գիմնազիայ, որտեղ կան

ուկրաինական, բելառուսական դասարաններ: Մենք էլ որպես քրիստոնեայ դիմեցինք մեր դասարանները ունենալու համար: Սկզբում չորսն էին, հիմա մնացել են երեքը: Սկիզբ շատ լաւ էր. ժողովրդի մէջ ոգեւորութիւնը մեծ էր: Աւելի քան 100 երեխայ էր այցելում դպրոց: Իսկ հիմա նրանց թիւը դարձել է 60: Դպրոցում եռամեայ կրթութիւն է: Այն գործում է մեր ուսումնական ծրագրով: Երեխաներ, որոնք դեռեւս ոչ մի անգամ չեն եղել Հայաստանում, հայերէն են գրում եւ կարդում: Տոմսկի հայկական կիրակնօրեայ դպրոցում ներկայ պահին օտարգգի աշակերտներն էլ են սովորում: Հայերէն սովորողների մէջ շատ են ռուս աղջիկներ, ովքեր ունեն հայ ընկերներ. վրացիներ եւ մուսուլմաններ էլ կան: Մեզ մօտ հայերէն էր սովորում անգամ Տոմսկի պետական համալսարանի դասախօսներից մէկը: Ի տարբերութիւն այս իրողութեան, կան հայեր, ովքեր նախընտրում են իրենց երեխաներին տանել չինական ու այլ դպրոցներ՝ մեկնաբանելով, թէ այնտեղ առաջընթացն աւելի մեծ է: Մենք էլ, նման բաներն հաշուի առնելով, որոշել ենք այս տարի մի նոր կարգ սահմանել. այն երեխան, ով չի յաճախում հայկական դպրոց, չի կարող յաճախել նաեւ պարի եւ երգի խմբակ:

-Իսկ այդ կարգը չի՞ նպաստի, որ երգ ու պարի խմբակներ էլ չգան:

-Կարծում եմ՝ չէ, քանի որ իւրաքանչիւր հայ հպարտանում է, երբ իր երեխան գեղեցիկ է պարում կամ երգում, ու չնայած դրան, չի մտածում երեխային հայկական դպրոց ուղարկելու մասին:

-Համայնքում աշխատելը հաւանաբար որոշակի դժուարութիւններ է առաջ բերում:

Քանի՞ տարի է, ինչ ղեկավարում էք Տոմսկի հայկական համայնքը:

-Ռուսաստանում աշխատանքս սկսել եմ որպէս շարքային ծառայող եւ հասել մինչեւ գնդապետի կոչման ու ներքին գործերի վարչութեան պետի տեղակալի պաշտօնին: Եւ երբ թոշակի անցայ, առաջարկեցին ղեկավարել համայնքը՝ մէկ տարի աշխատելու մտադրութեամբ: 2003 թուականին ստանձնեցի այդ գործը, բայց որոշ ժամանակ անց հասկացայ, որ աշխատանքն ինձ դուր է գալիս եւ կարողութիւններս էլ, որ 32 տարի Ռուսաստանին եմ ծառայեցրել, հիմա հարկաւոր է ծառայեցնել հայրենիքիս: Ինչ մնում է աշխատանքին, ապա այն

դժուար է: Յատկապես դժուար է հայութեանը մեկտեղելը: Երբ ասում ես ժողով պետք է անենք, ասում են՝ ժամանակ չկայ, բայց երբ ասում ես՝ եկեք խաշ-խորովածի, ժողովն անպայման ստացում է:

-Համայնքը Տոմսկի հայութեանը մեկտեղող ականդոյթներ ունի՞:

-Բոլոր ազգային ու եկեղեցական տոները հենց այդպիսին են մեզ համար: Բացի այդ, իւրաքանչիւր ամսուայ 24-ին անց ենք կացնում համայնքի խորհուրդ: Ինչու՞ 24-ին. դա Հայոց ցեղասպանութեան միլիոնաւոր զոհերի ոգեկոչման օրն է: Հենց դա էլ նպաստում է, որ ոչ ոք չմոռանայ, եւ բոլորը ներկայ գտնուեն խորհրդին: Բայց կազմակերպում ենք նաեւ ժամանցային ու սպորտային միջոցառումներ եւ մրցոյթներ՝ «միսս Հայաստանէ, նաեւ՝ նարդու, ֆուտբոլի, շախմատի մրցոյթներ: Վերջինը համայնքների միջեւ էր յայտարարուած, եւ մասնակից 26 խմբերի մէջ մենք՝ հայկական խումբը, զբաղեցրինք երրորդ տեղը:

-Տոմսկի ազգային փոքրամասնութիւնների հետ խնդիրներ, համագործակցութիւն կա՞յ:

-Տոմսկի շրջանում գրանցուած է աւելի քան 22 ազգային փոքրամասնութիւն: Դա չի խանգարում միմեանց հետ համերաշխ ապրելուն: Նահանգապետի նախաձեռնութեամբ ստեղծուել է գործում է ազգային փոքրամասնութիւնների կոմիտէ: Այդ կառոյցում պատասխանատու եմ օրէնսդիր մարմինների եւ կառոյցի կապը ապահովելու գործում: Ասեմ, որ համայնքի ներկայացուցիչների աջակցութեամբ իրականացման ընթացքում է ազգամիջեան բարեկամութեան յուշարձանի ստեղծման մտահղացումս: Վանաձորում արդէն քանդակում են յուշարձանը. այն խաչքար է լինելու եւ կը տեղադրուի Տոմսկի կենտրոնական մասում ապրիլի 22-ին՝ Ռուսական դրօշի օրը:

-Նկատելի՞ է Տոմսկի հայ համայնքի ներգաւուածութիւնը հասարակութեան կեանքում եւ երկրի զարգացման գործում:

-Կարծում եմ՝ նկատելի է, եւ նոյնիսկ կարող եմ ասել, որ հիմա արդէն

երեւան են գալիս ինտելիգենցիայի ներկայացուցիչներ՝ բժիշկներ, իրաւաբաններ, ուլքեր նաեւ օրէնսդիր դաշտում են աշխատում, աւելի քան 70 բուհաւարտ երիտասարդներ եւ չորս հայ պատգամաւոր կայ Տոմսկի շրջանում:

-Համայնքի առաջիկայ ծրագրերն ինչպիսի՞ն են:

-Մի ամբողջ ամիս՝ Տոմսկում հայկական մշակոյթի օրերի շրջանակում, ներկայացնելու ենք հայկական մշակոյթը, երգն ու պարը, կազմակերպելու ենք տարբեր ցուցահանդէսներ: Միջոցառումը տեղի է ունենալու մայիսին եւ իրականացման համար Տոմսկի նահանգապետը 50 հազար ռուբլի է տրամադրել: Եւ որ ամենակարեւորն է, յաճախ ու հետեւողականօրէն խօսելու ենք Հայոց ցեղասպանութեան մասին: Ի դէպ, նախաձեռնութիւնը հէնց նահանգապետինն է:



Գալուստ Տրապիզոնեան.
«յուրաքանչիւր հայ պետք է ամէն ինչ անի եւ՝ Հայաստանի, եւ՝ Արցախի զարգացման համար»

2011-04-13

-Որքա՞ն ժամանակ է, որ գոյութիւն ունի Արխագիայի «կռունկէ մշակութային հայկական համայնքը:

-Արխագիայի հայկական համայնքը կազմաւորուել է 1989 թ-ն: Առաջին ղեկավարը եղել է Ալբերտ Թօփալեանը, ով այն ժամանակ նաեւ գերագոյն խորհրդի փոխնախագահն էր: Ռազմական գործողութիւններից յետոյ Արխագիայի հայկական համայնքի երկրորդ համագումարի ժամանակ՝ 1994 թուականին, ես ընտրուեցի նախագահ եւ ղեկավարում էի համայնքը 11 տարի: 2003 թուականին ստեղծուեց Հայկական մշակութային կազմակերպութիւնը, «մաշտոցէ ընկերութիւնը եւ «կռունկէ հայկական համայնքը: Յետոյ որոշեցինք ստեղծել համընդհանուր հայկական համայնք՝ միայն մէկ համայնքապետով: Այն հիմնուեց 2007 թուականին: Հիմա համայնքի նախագահն է Սուրէն Կերսելեանը: Կան մի քանի փոխնախագահներ, որոնցից մէկը ես եմ:

-Երբ ներգրաուեցիք համայնքային կեանքում:

-Ես ծնուել եւ մեծացել եմ Արխագիայում: Ուկրաինայ մեկնեցի սովորելու նպատակով: Յետոյ սկսուեց պատերազմը, եւ ես վերադարձայ Արխագիայ: Ինչպէս Արխագիայի մնացած բնակիչները, այնպէս էլ ես բացառութիւն չկազմեցի. մասնակցեցի պատերազմին՝ պաշտպանելու մեր տները, ընտանիքները, հայրենիքը: Մասնակցել եմ բոլոր մարտական գործողութիւններին՝ ինչպէս արխագական զինուորական կազմաւորումներում, այնպէս էլ Մարշալ Բադրամեանի անուան հայկական գումարտակում: Պատերազմից յետոյ նշանակուեցի Արխագիայի կրթութեան փոխնախարար: Այդպիսով սկսուեց համագործակցութիւնը հայկական համայնքի հետ: Ինձ յաջողուեց պահպանել 39 հայկական դպրոցներ՝ այն, ինչ պատերազմից յետոյ էր մնացել, նաեւ որոնք քանդուել, կործանուել էին: Արխագիայի կրթութեան նախարարութիւնում երկու տարի աշխատելու ընթացքում կարողացայ նաեւ յարաբերութիւններ հաստատել ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հետ, որպէսզի ապահովենք դպրոցները դասագրքերով: Արխագիայում, ինչպէս Ղարաբաղում, բոլոր առարկաները դասաւանդում են հայերէն լեզուով: Ամենակարելորը, որ առաջին դասարանցիները Այբբենարանով են սովորում հայերէն:

-Խնդիրներ կան հայկական համայնքում:

-Քանի որ միակ կապը Հայաստանի հետ օդային ճանապարհին է, ծնողները սկսեցին իրենց երեխաներին ռուսական դպրոցներ տանել, որպէսզի ընդունուեն ապագայում Ռուսաստանի բուհեր: Դա աւելի հասանելի է եւ մօտ: Ցաւալի է այն փաստը, որ 39 հայկական դպրոցներից մնացել է միայն 32 դպրոց: Պատճառը դպրոցների փակումը չէ, այլ երեխաների բացակայութիւնը դպրոցից. այսինքն՝ աշակերտներ չունենք: Հիմա մենք պէտք է անենք ամէն ինչ՝ պահպանելու հայկական դպրոցները: Երբ ես նշանակուեցի փոխնախարար, դէմ էի, որ դպրոցում առարկաները թարգմանուեն եւ դասաւանդուեն ռուսերէնով: Բայց հիմա ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հովանու ներքոյ առաջին անգամ կը կազմակերպուի կլոր սեղան-քննարկում Արխագիայի բոլոր հայկական

դպրոցների տնօրենների եւ ուսմասվարների մասնակցությամբ: Այսօր ռուսական դպրոցներում սովորում են ավելի քան 8700 հայ աշակետներ, իսկ հայկական դպրոցներում 2200 աշակերտ: Հիմա վերանայում ենք ուսումնական համակարգը. ուսումնական ձեռնարկներն անհրաժեշտ է թարգմանել ռուսերեն: Ֆիզիկան, քիմիան, գծագրութիւնը հայկական դպրոցներում կը դասաւանդուի ռուսերէնով, իսկ հումանիտար առարկաները՝ հայերէնով: Սա նաեւ կ'օգնի Հայաստանում բուհ ընդունուողների թիւը մեծացնել: Հայաստանում բուհ ընդունում են Աբխազիայի շրջանաւարտների ընդամենը 5%-ը, մնացածը սովորում են կամ Աբխազիայում կամ Ռուսաստանում: Մենք հայ շրջանաւարտներին յորդորում ենք ընդունուել ՀՀ բուհեր: շնորհիւ ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան՝ մեզ համար արուած բացառութիւնների, Հայաստանում սովորող ուսանողների թիւը քիչ ավելի մեծացել է:

-Ինչպիսի՞ մշակութային եւ հայապահպանման ծրագրեր էք իրականցնում համայնքի համար:

- Շատ կարճ ժամանակում կարողացանք կառուցել եկեղեցի. վերջերս տեղի ունեցաւ խաչի օրհնութեան արարողութիւնը, որից յետոյ այն տեղադրեցինք եկեղեցու գմբէթին՝ 27 մետր բարձրութեան վրայ: Նախագիծը ընդունուել էր դեռ 2010 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից: Եկեղեցու առաջ ներկայումս կառուցում է ծառուղի՝ նուիրուած Աբխազիայի պատերազմում ընկած հայկական գումարտակի հերոսամարտիկներին՝ նրանց, ովքեր կեանքը տուեցին Աբխազիայի ազատութեան համար: Զոհուածների նկարները զետեղուած կը լինեն մարմարից եւ գրանիտից սալիկների վրայ, որոնք կը տեղադրուեն ծառուղում: Եկեղեցու իւրաքանչիւր այցելու կ'անցնի ծառուղով՝ յարգանքի տուրք մատուցելու ընկածներին:

-Ինչ՞ համագործակցութեան եզրեր կան Հայաստանի հետ:

-Շատ սերտ յարաբերութիւնների մէջ ենք ՀՀ սփիւռքի եւ կրթութեան ու գիտութեան նախարարութիւնների հետ, ինչպէս նաեւ Արցախի հետ: Ես շատ յաճախ եմ եղել Արցախում, եւ յարաբերութիւնները եւս սերտ են: Ակտիւ մասնակցում ենք նաեւ Հայաստանում կազմակերուող

միջոցառումներին: Անցած տարի Աբխազիայի երիտասարդներից լաւագոյն ներկայցուցիչները մասնակցեցին ՀՀ սփյուռքի նախարարութեան «արի տունէ ծրագրին: Մասնակցութիւնից յետոյ երեխաները պատմում էին իրենց տպաւորութիւնները բոլոր երիտասարդներին, ովքեր չէին եղել ծրագրին: Դա շատ կարեւոր է, քանի որ իւրաքանչիւր հայ ապրում է՝ իր հոգում ունենալով Հայաստանը: Անցած տարուայ մասնակիցներից երեքը այս տարի գալիս են Հայաստան՝ ընդունուելու բուհ: Սա էլ մի ճանապարհ է. Աբխազիայի հայկական դպրոցի շրջանաւարտներին ուղղորդել դէպի հայկական բուհեր՝ դրանով իսկ ստեղծելով աւելի մտերիմ ու սերտ յարաբերութիւններ Հայրենիքի հետ:

-Առաջանու՞մ են խնդիրներաբխազիայում ապրող ազգային փոքրամասնութիւնների հետ:

-Աբխազիայում ապրող հայերի 70%-ը ծագումով Արեւմտեան Հայաստանից են: Այսինքն՝ Յեղասպանութիւնից յետոյ մեզ ընդունել եւ պահել են այնտեղ: Մենք այնտեղ ժամանակաւոր բնոյթ կրող ազգ չենք. այն մեր Հայրենիքն է: Անմասն չենք մնացել մեր Հայրենիքի պաշտպանութեան հարցում՝ ապացուցելով մեր՝ Աբխազիայի արժանաւոր քաղաքացի լինելու փաստը: Պատերազմում յանուն Աբխազիայի ազատութեան ընկել են մօտաւորապէս 200 հայեր՝ մեր եղբայները: Նրանց մահը մեզ իրաւունք եւ հնարաւորութիւն է տալիս Աբխազիայում մեզ զգալու յարմարաւէտ եւ հանգիստ: Նոյնիսկ Ֆիլմ կայ՝ Հայկական գումարտակի մասին նկարուած: Այնտեղ էլ նշուած է, որ հայկական գումարտակը միակ միատարր ազգային գումարտակն էր, որ մասնակցում էր պատերազմին: Ֆիլմը նկարահանուել է գերմանացիների կողմից: Գրուել է նաեւ գիրք «հայկական գումարտակէ վերնագրով: Ամենադժուար պատերազմական գօտիներում կռուին մասնակցել է հայկական գումարտակը: Իմ դեկավարութեամբ գրաւեցինք անյաղթահարելի ստրատեգիական կէտը, ինչի համար ես ստացայ հերոսի կոչում: Գումարտակում կային Աբխազիայի այլ հերոսներ նոյնպէս: Այսօր չենք էլ մտածում, թէ կարող են խնդիրներ առաջանալ ազգային հողի վրայ: Անթոյլատրելի է. չի եղել ու չի կարող լինել, որովհետեւ մեզ տրուած է իրաւունք ապրելու այնտեղ: Համարեա բոլոր կառավարական

ատեաններում հայեր կան: Մենք շնորհակալութիւն ենք յայտնում կառավարութեանը ջերմ յարաբերութիւնների եւ վերաբերմունքի համար: Բացի այդ, մեր եւ արխագների ճակատագիրը շատ նման է: Արխագիայում ապրում են ընդամենը 100 000 արխագներ, իսկ դրսում՝ 500 000: Ես ուզում եմ նաեւ Արցախին մաղթել զարգացում եւ ինքնավարութեան ճանաչում, ինչպէս որ Արխագիան ունեցաւ: Իրաքանչիւր հայ պետք է ամէն ինչ անի եւ՝ Հայաստանի, եւ՝ Արցախի զարգացման համար:



Վերատպութիւն

ԹԱՄԱՐՆ ԻՐՕՔ ՉԻ ԻԻՐԱՑՐԵԼ ՄԻԼԻՈՆԸ, քայց ՀԱԿԱՌԱԿ ԻՐ ԿԱՍՔԻՆ

2011-04-16

մնում է աւելացնել, որ իսկապէս Թամար Պօղոսեանը ստիպուած կը լինի պայքարել իրաւական հարթութիւնում, սակայն դա հազիւ թէ իր ակնարկածը լինի: Իր բողոք-նամակների հետքերով ստուգումների մասին նախնական տեղեկութիւնները ոչ մի լաւ բան չեն խոստանում: Այսպէս, մեր տեղեկութիւններով, «մէկ ազգ, մէկ մշակոյթ է հիմնադրամը 2008-2010 թթ. ձեռնարկատիրական գործունէութիւն չի իրականացրել հետեւեալ բոլոր ուղղութիւններով՝ հրատարակչական գործ, համերգային գործունէութիւն, տեղեկատուական կրիչների վերարտադրում, ժողովրդական համալսարանների գործունէութիւն, ցուցահանդէսների կազմակերպում: Սակայն Թամարի համար աւելի տխուր թուեր ու փաստեր ունենք ձեռքի տակ:

կան ոլորտը կարգաւորող իրաւական ակտերի որոշ դրոյթների անհամապատասխանութիւնների եւ կանոնադրական գործառոյթների ոչ լիարժէք կատարման ապացոյցներ, մենք կ'անդրադառնանք յատկապէս ֆինանսական կողմին: Հիմնադրամը 2008 թուականին ՀՀ պետական բիջէից ֆինանսաւորուել է 93,1 միլիոն դրամով. այդ թումմ՝ 13,7 միլիոն դրամ աշխատավարձ ¥1,5 միլիոն պարգեւավճարք, ծրագրերի հաշուին՝ 6,5 միլիոն դրամ: 2009 թուականին ֆինանսաւորուել է 21,2 միլիոն դրամով, որից աշխատավարձ՝ 15,5 միլիոն դրամ ¥1,8 միլիոն պարգեւավճարք, ծրագրերի հաշուին՝ 185

հազար դրամ: Յատկանշական է, որ 2009՝ ոչ փառատօնային տարում, հիմնադրամը հանգիստ շարունակել է աշխատել նոյն հաստիքացուցակով, այսինքն՝ վարձատրել է չեղած միջոցառումների իրականացման համար: 2010 թուականին հիմնադրամն արդեն գործել է սփյուռքի նախարարության հետ կնքուած պայմանագրերի շրջանակներում. 195,7 միլիոն դրամից 15,8-ն ուղղուել է աշխատավարձերի վճարմանը, 1,2-ը՝ պարգևավճարների, իսկ կատարուած ծրագրերի համար՝ 4,5 միլիոն դրամ հաւելավճար է յատկացուել:

տնօրէնի հրամանով առաւել բարձր պարգևավճարներ եւ հաւելավճարներ են ստացել տնօրէն Թամար Պօղոսեանը, գեղարուեստական ղեկավար Արմէն Մանուկեանը, աշխատակազմի ղեկավար, համատեղութեան կարգով նաեւ գանձապահ Քեւ Թամարի քոյր՝ Քնարիկ Պօղոսեանը, արտաքին յարաբերութիւնների գծով գլխաւոր մասնագէտ Զարուհի Դադայեանը Քհամատեղութեան կարգով՝ Թամարի բարեկամուհին, որը փետրուարին ազատուել է աշխատանքից: 2010 թուականին հիմնադրամի գործադիր տնօրէն Թամար Պօղոսեանի կողմից լիազօր մարմնին՝ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին է ներկայացուել 5.083.972 դրամ հաւելավճարի հաշուարկ, որը չի ընդունուել եւ չի վճարուել: Հէնց այս 5 միլիոնը իւրացնելու լուրերն էր հերքել երէկ Թամարը: Ի հարկէ ճիշտ է ասել Թամարը՝ չի իւրացրել 5 միլիոն, բայց իրենից չկախուած հանգամանքների բերումով. պարզապէս Հրանոյշ Յակոբեանը փողը չի տուել:

եւ վերջում. «պայքարն իրաւական հարթութիւն փոխադրողէ Թամար Պօղոսեանին խորհուրդ կը տանք ձեռ քաշել կառավարութեանը դատի տալու մտքից, որովհետեւ վարչապետի վերահսկողական ծառայութեան արձանագրած փաստերի հետ կատակ չեն անում:

Կ՛ԱՐԻՆԷ ԱՇՈՒՂԵԱՆ

Չորրորդ Ինքնիշխանութիւն



ՏԱԳՆԱՊԸ ՀԱՍՍԱԻ ՍԻՐԻԱ, ԱՅՍԻՆՔՆ ՆԱԵԻ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ

2011-04-16

Դրրաայ, Լաթաքիայ, Բանիաս սիրիական քաղաքներից յետոյ խոովութիւնները երեքշաբթի օրը հասան նաեւ մինչ այդ հանդարտ ու հանգիստ Հայէպ հնագոյն քաղաքը, որտեղ մահմեդական ու քրիստոնէայ տարբեր համայնքների հետ ապրում են նաեւ մեր բազմահազար հայրենակիցներ իրենց եկեղեցիներով, դպրոցներով, ազգային, մշակութային, բարեգործական հաստատութիւններով ու կազմակերպութիւններով: Ապրում են որպէս երկրի լիարժէք քաղաքացիներ՝ սիրիական մշակոյթի ու տնտեսութեան մէջ իրենց կայուն ներդրումներով:

Անշուշտ, ինչպէս արաբական երկրներից շատերում—Թունիս, Եգիպտոս, Բահրէյն, Յորդանան, Մարոկկոյ, Եմեն ու Լիբիա—Սիրիայում էլ կուտակուած նմանատիպ շատ հարցեր կան՝ քաղաքական, սոցիալական եւ այլ բնոյթի: Բայց ինչպէս ասում են արեւմտեան քաղաքագետները՝ անալոգիաները բնաւ ամբողջութեամբ իրար չեն համապատասխանում: Իւրաքանչիւր յեղափոխութիւն կամ հասարակական ընդվզում ունի իր եւ միայն իրեն յատուկ պատճառները, առաձնայատկութիւնները: Սիրիան արտաքին միջամտութեան համար ունի այլ «գրաւչութիւնէ: Արաբական աշխարհում Սիրիան այն միակն երկիրն է, որ 1948 թ.-ից ի վեր տեւական պատերազմական վիճակի մէջ է գտնուում Իսրայէլի հետ, որը յաջորդական 4 պատերազմներից յետոյ դեռեւս գրաւման տակ է պահում Գոլանի բարձրաւանդակը: Երկրորդը՝ Արաբական աշխարհում Դամասկոսը Թեհրանի միակ բարեկամն է Իսրայէլի դէմ իր պայքարում եւ ընդհանրապէս: Ահա այս երկու հանգամանքները այդ երկիրը դարձնում են Իսրայէլի ու նրա արեւմտեան դաշնակիցների համար գլխաւոր թիրախ:

Հասարակական կարծիքը Հայաստանում ընդհանրապէս տեղեկատուական առօրեայ իր սնունդն ստանում է արեւմտեան աղբիւրներից, աւելի ճիշտ՝ միջնորդաւորուած նրանցից: BBC, CNN, Euronews, «ալ Ջազիրաէ եւ միւսները նման պարագաներում գրեթէ միշտ կողմնակալ են եւ նպատակաւորուած, հետեւաբար՝ միակողմանի: Այդ միակողմանիութեան մէջ բնականաբար չի երեւում Սիրիայում վերջին 3 շաբաթներում պատահող խոովութիւնների լրիւ,

ամբողջական պատկերը: Այդ երկրում աւելի քան 40 տարուց ի վեր ընդյատակեայ գործում է «մուսուլման եղբայրների ամենակատաղի թեւերից մէկը, որին շուրջ 30 տարի առաջ դաժանօրէն պատժեց հանգուցեալ նախագահ Հաֆեզ Ասադը: Այդ կազմակերպութիւնը հիմա ամենակատաղի հակառակորդն է նախագահ Բաշար Ասադին ու նրա իշխանութեանը: Այս օրերին «մուսուլման եղբայրները շատ աշխոյժ են ու վտանգաւոր, մանաւանդ որ զինուած են ու յանդուգն: Երկրի տարբեր քաղաքներում նրանք իրականացնում են անվտանգութեան ուժերի դէմ զինեալ գործողութիւններ, հրահրում ազգաբնակչութեան մէջ գոյութիւն ունեցող ապրուստի եւ ազատութիւնների սահմանափակման դէմ բնական դժգոհութիւնները:

Իրերի այս կացութեան մէջ բնականաբար մեր առաջին մտահոգ հայեացքը պէտք է ուղղուի դէպի այս երկրում եւ հարեւան Լիբանանում ապրող (վերջինիս արդէն փխրուն վիճակը մեծապէս կախեալ է առաջինի կացութիւնից) հայութեանը: Սիրիահայութիւնը ներկայ ռեժիմի պայմաններում հանգիստ եւ ապահով է զգում իրեն եւ ունի զարգացման հեռանկարներ թէ՛ ազգային, թէ՛ անհատական-տնտեսական առումով: Որեւէ փոփոխութիւն, մանաւանդ կրօնական ֆունդամենտալիզմի դրսեւորմամբ, սպառնում է արտագաղթի մղել Հալէպի, Դամասկոսի, Քամիշլիի, Լաթաքիայի ու Քեսաբի հայութեանը, ոչնչացնել հայաշունչ մեր ամենակարեւոր գաղթօջախներից մէկը, իր հերթին բոլորովին անորոշ ապագայի մատնելով հարեւան Լիբանանի հայագաղութը՝ սկսեալ սահմանագլխին գտնուող Այնճար հայկական գիւղից:

Երկրորդ տարածաշրջանում Սիրիան մեր երկրի՝ Հայաստանի յուսալի բարեկամներից է, որը լաւ յարաբերութիւններից բացի միջազգային կազմակերպութիւններում բնաւ չի քուէարկում մեր երկրի դէմ:

Երրորդ Սիրիայում որեւէ փոփոխութիւն, մանաւանդ իսրայէլական կամ արեւմտեան խարդաւանքով, բերելու է Թեհրանի ազդեցութեան թուլացմանը այդ երկրում, աւելի լայն բացելով տարածքը թուրքական նորանոր ներթափանցումների առաջ, ինչը լրջագոյն սպառնալիք է մեր երկրին տարածաշրջանային յարաբերութիւնների տեսակէտից:

Ի հարկէ, ոչ Հայաստանը եւ ոչ էլ հայութիւնը ի վիճակի չեն ազդու

ներգործութիւն ունենալ Սիրիայում տեղի ունեցող զարգացումների վրայ: Մակայն կարող ենք բարոյապէս զօրակցել, ինչպէս նաեւ ազգային շահերի գիտակցութեամբ մօտենալ այնտեղ ծաւալուող իրադարձութիւններին եւ այդ, միայն ա՛յդ տեսանկիւնից գնահատել դրանք:

Պատրանքներ չունենանք. ողջ աշխարհը, ամենաթոյլ երկրից մինչեւ ամենաուժեղը, դեկավարում են միայն իրենց ազգային շահերով: Մենք պետք է վարուենք նոյնպէս:

Մաղթենք, որ Սիրիայի իշխանութիւններին ի վերջոյ կը յաջողուի հիմնարար բարեփոխումներով եւ միաժամանակ կարգուկանոնի եւ արդարութեան վերահաստատումով ներքին խաղաղութիւնը վերադարձնել այդ երկրին:

Յակոբ Աւետիքեան



**«ՄԵՎ ԹԱՄԱՐ, ՄԷՎ Ազգուտակե-
ի ԹԱՄԱՐԸ Մատը մտցրել է
ՄԵՂՈՒԻ ԲՈՒՆԸ**

2011-04-15

հիմայ ամէն ինչ տանում է նրան, որ Թամարը վերադառնա «հին տաշտակինէ, որովհետեւ

նախա-նախարարական տարիները նրա մէջ ձեւաւորել են կայուն սովորոյթներ: Պարզում է՝ վատ սովորոյթներ: Թամարը մի ուրիշ ձեւի է կատաղել՝ նա բողոքներ է գրել եւ ուղարկել Հայաստանի բոլոր իշխանաւորներին: Շատ ջիգեարով քոյր, մօրաքոյր եւ սանամեր Թամարը կարճ ժամանակ անց հաստատ պիտի ափսոսայ, որ «մէկ ազգ, մէկ մշակոյթէ հիմնադրամում հարազատներից մեկնումէկի փոխարէն պետք է մի մասնագետի աշխատանքի ընդունէր՝ գոնէ իրաւաբանի, որ իրեն յարկ եղած դէպքում փրկէր ծիծաղելի վիճակների մէջ յայտնուելուց:

Եթէ կարճ փորձենք նեկայացնել Թամարի բողոքի էութիւնը, ապա ստացում է, որ նա պահանջում է պատժել Հրանոյշ Յակոբեանին՝ իրեն ապօրինութիւններ անելու ազատութիւնից զրկելու համար: Նախ՝

ՀՀ գլխավոր դատախազին ուղղուած բողոքի մասին: Տիկին Թամարը Աղուան Յովսէփեանից պահանջում է կարգի հրաւիրել սփիւռքի նախարարին, ով ի պաշտօնէ լինելով հիմնադրամի նախագահը, ի դէպ, միանգամայն իրաւասու էր հրաւիրել եւ անցկացնել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրէնսդրութեան: 2010 թուականի դեկտեմբերի 28-ին նախարարութիւնում կայացել է հոգաբարձուների խորհրդի նիստը, եւ 22 մասնակիցները որոշել են «մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամին 2011 թուականի պետական բիւջէից տրամադրուող 18,6 միլիոն դրամից 12 միլիոնը յատկացնել ծրագրերի իրականացմանը, իսկ մնացեալը տրամադրել որպէս հիմնադրամի պահպանման ծախսեր: Յատկանշականն այն է, որ Թամարը նիստի լուրն առնելուն պէս՝ հիւանդացել է եւ գնացել, ամիս ու կէս պառկել հիւանդանոցում, միաժամանակ ապսպրելով, որ հիմնադրամից ոչ ոք չմասնակցի նիստին: Հաւանաբար, ենթադրել է, որ այդպիսով նիստը «լեգիտիմէ չի լինի»: Հիմա Թամարը սրտատրոփ սպասում է, որ գլխավոր դատախազը սաստի սփիւռքի նախարարին, որ նա իրեն զրկել է ազգուտակին լիութիւն աշխատավարձ բաժանելու հնարաւորութիւնից: Սակայն եթէ Թամարի բարեկամների մէջ իրաւաբան լինելը, նախքան դատախազութիւն դիմելը կը ծանօթանար որոշ փաստաթղթերի հետ, օրինակ՝ կը տեղեկանար, որ սփիւռքի նախարարը առաջնորդուել է ՀՀ 2011 թուականի պետական բիւջէի մասին օրէնքի համապատասխան հաւելուածով, «հիմնադրամների մասին» օրէնքով, ինչպէս նաեւ «մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամի կանոնադրութեամբ եւ ըստ այդմ՝ գումարների մի մասը փոխանցել նախարարութեան ենթակայութեամբ գործող «հայրենիք-սփիւռքէ Պոակ-ին» ստանալով կառավարութեան համաձայնութիւնը: Նոյն օրէնքով, ի դէպ, հիմնադրամի գործադիր տնօրէնը պարտաւոր էր ենթարկուել հոգաբարձուների խորհրդի որոշմանը՝ ներկայացնելով նախահաշիւ եւ ապա կնքելով պայմանագիր: Թամարը, սակայն, գերադասել է վիճարկել խորհրդի որոշումը՝ գլխի չընկնելով, որ այս կերպ բացայայտում են մի շարք հանգամանքներ՝ իր պրոֆէսիոնալ անհամապատասխանութիւնը զբաղեցրած պաշտօնին, ազգուտակին յարմարաւետ աշխատանքների տեղաւորելը եւ հովանաւորչութիւնը, հիմնադրամին յատկացուող գումարներն անարդիւնաւետ ծախսելը, աւելի կոնկրետ՝ աշխատավարձերի եւ հաւելավճարների տեսքով գրպանելը:

Ընդհանրապես, արժեր, որ Թամարը մի թեթև աչքի տակով անցկացնէր որոշ օրէնքներ, որպէսզի հասկանար, որ, օրինակ, հիմնադրամը սովորաբար ինքն է գումարներ հայթայթում իր ծրագրերն իրագործելու համար, այլ ոչ թէ յոյսը դնում է պետութիւնից ստացուող պատրաստի գումարների վրայ:

սերժ Սարգսեանին ուղղած նամակում Թամարը տրտնջացել է, որ իրեն առաջարկում են առանց մրցոյթի պայմանագիր կնքել ինչ-ինչ կազմակերպութեան հետ: Այ սա յատկապէս է հետաքրքիր: Որովհետեւ, ըստ որոշ լուրերի, մրցոյթները հէնց Թամարն է տնավարի արել: Խօսքը «համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման եւ անցկացման մասին» էր ամառաշնորհային ծրագրի մասին է: Դրան մենք դեռ կ'անդրադառնանք՝ աւելի հանգամանալից: Իսկ հիմա նշենք, որ Թամարը Հրանոյշ Յակոբեանից բողոքել է նաեւ վարչապետին, որի վերահսկողական ծառայութիւնը ներկայումս քննութիւն է անցկացնում: Դա որ հաստատ չպէտք է անէր. այս դէպքերի համար է, որ ասում են՝ ձեռքը մտցրել է մեղուի բունը:

աշխատանքային օրէնսդրութեանը յղումներ անող Թամարը 2010 թուականին տեղի ունեցած «մէկ ազգ, մէկ մշակոյթ» համահայկական մշակութային 4-րդ փառատօնի միայն «կատարողական արուեստի օրեր» ծրագրի շրջանակներում հիմնադրամի աշխատակիցներին «արտաժամեաէ աշխատանքների դիմաց բարի մօրաքրոջ առատաձեռնութեամբ այնքան գումարներ է հաւելագրել, որ իրեն չպէտք է թոյլ տար՝ պարզ զգուշութիւնից ելնելով, չխօսելով այլեւս իրաւունքի եւ օրինաւորութեան մասին: Իրականում իր պարտաւորութեան համաձայն մէկ շաբաթ աշխատելու դիմաց Թամարն ինքն իրեն պարգեւատրել է 2. 631.850 դրամով (կայքերից մէկի տեղեկութեան մէջ տեղ գտած սիսալ թիւը երէկ կրկնուել էր մեր լուրի մէջ): Քնարիկ Պօղոսեանը, որ Թամարի հարազատ քոյրն է, հիմնադրամում երկրորդ մարդը՝ նա եւ աշխատակազմի ղեկավարն է, եւ փառատօնի շտաբի ղեկավարը, Թամարի քոյրն ահա, փառատօնի մի քանի օրերի ընթացքում ընտանեկան բիւջէն հարստացրել է 196.430 դրամով, Թամարի քրոջ աղջիկը՝ Քրիստինէ Վարդանեանը՝ մօտ 300 հազարով, բարեկամուհին՝ Չարուհի Դադայեանը, որը ձեւակերպուած է որպէս հիմնադրամի գլխաւոր մասնագէտ, 504. 365-դրամով է

հարստացել: Ընդհանուր առմամբ՝ շուրջ 5 միլիոն դրամ Թամարը նուիրել է աշխատակազմին կամ, որ նույնն է՝ ծանօթ-բարեկամներին: «քանի Թամար մորքուրը «սաղ աե, մորքուրի էրեխեքը պիտի շոկոլադ ուտենե՛ք՝ այս շրջանակներում է աշխատել եւ գործել Թամարի հիմնադրամը. միայն քոյրը կարող է ինքն իրեն վտանգելով եւ իրեն վստահուած հիմնադրամի գումարները տարբեր տողերի տակ դուրս գրելով՝ քրոջը նուիրել 2 միլիոն դրամ ու մօտ մի միլիոնի չափ էլ պարգեւատրում տալ մէկ շաբաթուայ չարքաշ աշխատանքի համար: Հիմա պարզ է, թէ ինչու է աղմկում Թամարը. ախր 2008 թուականին 138 միլիոն դրամով 12 միջոցառում է կազմակերպել, իսկ 2010-ին չեն թողել, որ «մէկ ազգ, մէկ մշակոյթըէ լրիւ վերածուի «մէկ Թամար, մէկ ազգուտակե-ի:

հ.Գ. Յաջորդիւ կ'անդրադառնանք նաեւ Թամար Պօղոսեանի՝ այսօր կայանալիք ասուլիսին: Նկատենք, որ Թամար Պօղոսեանի հանրային ակտիւութեան սաստկանալուն զուգընթաց՝ ծագում է նրան իր ազգականի՝ Դաւիթ Յակոբեանի կուսակցութիւնում տեսնելու միտքը: Քանի որ Օեկ-ն արդէն ունի «ֆիքսուածէ «եզ առիծէ, հին Օեկ-ական եռանդով Թամարը կարող է դառնալ մարքսիստների «եզ առիծըէ:

ԿԱՐԻՆԵ ԱՇՈՒՂՅԱՆ

«Չորրորդ Ինքնիշխանություն»



Հայրենադարձներ

Հայրենիքում՝ Հայրենիքի համար

2011-04-11

-պարոն Յովնանեան, որտեղի՞ց են Ձեր արմատները, բացի արեան կանչից հոգեւոր ինչ կապ էք տեսնում Ձեր եւ Ձեր նախնիների միջեւ:

-Հայրս՝ Ստեփան Յովնանեանը, բնիկ մալաթիացի էր, հրաշքով էր փրկուել Յեղասպանութիւնից, մայրս՝ Եսթեր Յովնանեանը /Ալմաջեան/, սեբաստացի էր՝ Եղեռնի վերապրողներից մէկը: Նրանք հաստատուել էին Իրաքի Քերքուք քաղաքում: Հայրս բարեգործ էր, ստեղծող, աշխատող շինարար. նա Քերքուքի հայկական եկեղեցուն կից Թարգմանչաց դպրոցը նուիրել էր

գաղութին: Մայրս միայն ՄԱՅՐ էր...նայ մեծ հոգեբան էր, խելացի, խորագէտ, իմաստուն...երբ հայրս վարձատրում էր իր աշխատողներին, մայրս էլ դրամ էր տալիս թուրք մուրացիկներին, ովքեր գալիս էին աշխատողների մօտ աշխատավարձի օրերին: Երբ հայրս հարցնում էր, թե ինչու է նրանց՝ թուրքերին, դրամ տալիս, մայրս պատասխանում էր. <Որ միշտ մուրացիկ մնան>:

Նախնիներիս հետ ունեցած կապը Հայրենիքի կարօտն է. կան երկու տեսակի հայեր՝ նրանք, ովքեր կապրին Հայաստանի մեջ, եւ նրանք, ովքեր կապրին Հայաստանի կարօտով: Նրանք, ովքեր ապրում են Հայաստանում, նման են անտառում ապրողներին, որոնք ծառերը չեն տեսնում յաճախ: Իմ նախնիների կարօտն է, որ փոխանցուել է ինձ, այն կարօտը, որ մեկ անուն ունի՝ Հայրենիք: Ամենքս էլ մեծ գործեր ենք արել՝ հայրս, մայրս, եղբայրներս;

-դուք այն եզակի հայերից էք, որ իրենց բարեգործություններն առանց ի ցոյց դնելու են կեանքի կոչում: Ինչ՞ն է Ձեզ դրդում զբաղուելու բարեգործութեամբ:

-Ամբողջ հաւատքը տասը պատուիրանների մեջ է: Ծնողներս պատուիրում էին մեզ Նարեկացի կարդալ, եկեղեցի յաճախել, ամուր հաւատք ունենալ, կարեկից լինել ուրիշներին. իրենք միշտ այդպիսին էին: Աչքս միշտ տեսել է բարի գործերի հեղինակ հօրս. ես այդպէս եմ մտածել, ու այլ կերպ լինել չէր կարող:

Յիշում եմ՝ մի օր տեսայ հօրս դպրոցի տանիքի վրայ ուսումնասիրում էր վիճակը: Նայեցի նրան ներքեւից ու հպարտ զգացի, որովհետեւ ինչպէս ասացի, հայրս այդ դպրոցը գնել էր եւ նուիրել երեխաներին, որ այլեւս վարձակալութեամբ չյաճախէին: Յետոյ զգացի, որ նա միայն իմ հայրը չէ, այլ՝ իմ բոլոր ընկերների, բոլոր այն երեխաների, ովքեր այդ դպրոց էին յաճախում: Հօրս բարեգործութիւնն ինձ համար կեանքումս սովորած ամենամեծ դասն էր:

-ուրեմն Քերքուքն է Ձեր ծննդավայրը, մինչդեռ Հայրենիքը...

-Այո, Քերքուքն է իմ ծննդավայրը. ծնուել եմ այնտեղ 1932 թուականին, իսկ Հայրենիքս Հայաստանն է: Գաղթական ծնողներս, հիմնաւորուելով

Քերքուքում, շինեցին իրենց բոյնը, հիմնեցին իրենց օջախը: Բոլորը զարմանում էին, որ գաղթական հայերը կարողացան ապրել, վերապրել, հայ մնալ, լեզու եւ հաւատք պահել, իրենց երեխաների համար դպրոց ու եկեղեցի կառուցել, աճել, զօրանալ, բազմանալ: Այդպիսին է Հայը:

-ինչպե՞ս յայտնուեցից Ամերիկայում եւ հանդիպեցիք տիկին Յասմինին:

-1952-ին դուրս եկայ Իրաքից, ուղեւորուեցի Ամերիկա՝ Ֆիլադելֆիայ՝ սովորելու, բարձրագույն կրթութիւն ստանալու: Ընտրեցի ֆիզիկոսի մասնագիտութիւնը. Այն ճկունութիւն է տալիս մտքին: Յետագայում փոխադրուեցի Նիւ Ջերսի: Ատլանտիկ Սիթիում էլ հանդիպեցի իմ երկրորդ կէսին՝ Յասմիկ Պաղտոյեանին, ով եկել էր Ամերիկա Երուսաղէմից՝ մանկավարժութիւն ուսանելու: Հրաշալի մտաւորական Սեդրակ Պաղտոյեանի եւ աննման հայուհի Սիրանոյշ Քոպալեանի հինգ զաւակներից երրորդն է Յասմիկը: Սեդրակ Պաղտոյեանը Երուսաղէմի Թարգմանչաց վարժարանում աւագ ուսուցիչ է եղել: Հրաշքով ազատուելով Յեղասպանութիւնից՝ եւ հաստատուելով Երուսաղէմում՝ տարիներ անց Պաղտոյեանը վեց հարիւր էջանոց մի գիրք է հեղինակում այդ ոճրագործութեան մասին՝ <Երբ դրախտը դարձաւ դժոխք> վերնագրով:

1959-ին ես եւ Յասմիկն ամուսնացանք հայկական եկեղեցում: Յետոյ ծնուեցին մեր երեխաները՝ Շանթը եւ Նինան. նրանք էլ կրթուեցին, ամուսնացան: Շանթը՝ Հիլդէյի հետ, Նինան՝ Արթուրի, ու մեզ պարգեւեցին հինգ հրաշալի թոռնիկներ:

-հայաստանն է Ձեր վերջին ու վերջնական հանգրուանը, թե՞ հնարաւոր է, որ մի օր ինչ-ինչ հանգամանքներ ստիպեն Ձեզ հեռանալ Հայրենիքից:

-Կ'ուզեմ ապրել աշխարհի մէջ, ունենալ լաւ բարեկամներ ամէն տեղ՝ աշխարհի բոլոր կողմերում: Հեռանա՞լ Հայաստանից... երբէք մտքովս չի անցել: Ես չեմ մօտեցել, որ հեռանամ:

-ու՞մ մտահոգացումն էր <Վահագնի Թաղամասի> հիմնումը:

-Հիմնել եմ ես. Իմ մտահղացումն է եղել, բայց անունը ես չեմ դրել: Ռեժիսոր Յարութին Խաչատրեանը առաջարկեց, ու երբ ես եկայ, անունն արդեն դրուած էր; Համայնքային ընդարձակ բնակավայրի տարածքը երեք հարիւրից աւելի նորակառոյց տներից է բաղկացած եւ դեռ պիտի համալրուի նոր կառոյցներով:

-ն՞ վ է Ձեզ աջակցում կարելոր գործերում: Խօսքս եւ բարոյական, եւ ֆինանսական աջակցութեանն է վերաբերում:

-Բարոյապէս, հոգեպէս ինձ նեցուկ է հայ ժողուրդը, հայ մշակոյթը: Ֆինանսական հարցերը ես եմ լուծում; Իսկ ընդհանրապէս ինձ մեծ աջակցութիւն են ցուցաբերում աղջիկս, տղաս, փեսաս, նոյնիսկ՝ թոռներս իրենց դրական լիցքերով: Տիկնոջս՝ Յասմիկին, ամէն առաւօտ համբուրում եմ, իսկ նա ինձ օրհնում է՝ասելով. <Հող բոնես, ոսկի դառնա>, ու սկսում է իմ աշխատանքային օրը:

-ինչը՞ կարող է Ձեզ ստիպել հրաժարուել Ձեր առաքելութիւնից:

-Մահը, միայն մահը; Մինչեւ վերջին շունչս պիտի կառուցեմ, ստեղծեմ, բարեգործութիւն անեմ: Աստուած ինձ դրա համար է շունչ ու հոգի տուել:

Կ'արինէ Աւագեան